ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 9 փետրվարի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը
Նախագահությամբ՝ Ռ.Պապայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Հ.Դանիելյանի

Քննության առնելով << քաղաքացիներ Մարիետա Հախվերդյանի եւ Սամվել Ղարիբյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացիներ Մարիետա Հախվերդյանը եւ Սամվել Ղարիբյանը դիմել են Սահմանադրական դատարան, վիճարկելով << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1 ենթակետի, 231.2 հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ եւ 3-րդ ենթակետերի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է << Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ << Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են << Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Մ. Հախվերդյանի եւ Ս. Ղարիբյանի դիմումը՝ << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1 ենթակետի, 231.2 հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ եւ 3-րդ ենթակետերի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել << Ազգային Ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՊԱՐՏՈՒՂԵՐ-ՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ